



**<ՅՈՒՆԻԲԱՆԿ> ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ  
2021Թ. ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Zoom հավելվածի միջոցով իրական ժամանակի ռեժիմում  
ուրբաթ, 24 հունիսի 2022թ., 14:10**

Մասնակցեցին՝

**Բաժնետերեր**

13 բաժնետեր նիստի բացման պահին

**Բանկի Խորհուրդ**

Գագիկ Զաքարյան (նախագահ)

Վարդան Աթայան

**Բանկի Վարչություն**

Մեսրոպ Հակոբյան (նախագահ)

Արարատ Ղուկասյան

Գոհար Գրիգորյան

Օվսաննա Առաքելյան

Գուրգեն Ղուկասյան

Դավիթ Պետրոսյան

Արթուր Ապերյան

**Հրավիրվածներ**

<< կենտրոնական բանկի ներկայացուցիչներ Մանանա Աղիկյան, Արփենիկ Սահակյան,  
Զարուհի Ղազարյան

<Ֆինարմ> ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիայի գործադիր տնօրեն Կարեն  
Զաքարյան

<Գրանթ Թորնթոն> ՓԲԸ գործադիր տնօրեն Արմեն Հովհաննիսյան

Ներքին աուդիտի տնօրեն Արթուր Ղուկասով

Ռիսկերի կառավարման գծով տնօրեն Սերգեյ Քոչարյան

Համապատասխանության դեպարտամենտի տնօրեն Լևոն Գրիգորյան

Ժողովի քարտուղար նշանակվեց Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աննա Բաղդյանը:

**Աննա Բաղդյանը** ներկայացրեց, որ 24.06.2022թ. <Յունիբանկ> ԲԲԸ Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի քվեարկությունն իրականացվել է քվեաթերթիկների միջոցով: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմված է 2022թ. մայիսի 23 դրությամբ:

Ժողովի գումարման մասին հայտարարությունը պատշաճ կերպով տեղադրվել է Բանկի պաշտոնական կայքէջում, հրապարակվել է <Ժողովուրդ> օրաթերթում, ծանուցումները քվեաթերթիկների հետ միասին ուղարկվել են բաժնետերերին փոստի միջոցով 08.06.2022թ-ին:

Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացրած քվեաթերթիկների ընդունումն ավարտվել է 24.06.2022թ-ին՝ մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահը: Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը կազմվել է 24.06.2022թ-ին:

Բանկի քվեարկող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի գումարային ձայների քանակը կազմել է 172,886,525 հատ, որից քվեարկությանը մասնակցել է ձայնի իրավունք ունեցող 162,308,261 բաժնետոմս, կամ տոկոսային հարաբերությամբ 93,88%-ը:

Քվորումն ապահովված է:

**Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը** բացեց նիստը և ողջունեց բոլոր բաժնետերերին և հյուրերին: Նշեց, որ հաշվետու տարում Բանկի կողմից մեծ աշխատանք է տարվել 2020 թվականի հետևանքների հաղթահարման ուղղությամբ՝ Բանկի հետագա դինամիկ զարգացումն ապահովելու համար:

Որպես 2021 թվականի ուշագրավ իրադարձություն **Գագիկ Զաքարյանն** առանձնացրեց Բանկի կանոնադրական կապիտալի համալրումը շուրջ 1,1 մլրդ դրամով՝ Յունիբանկի արտոնյալ բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման տեղաբաշխման միջոցով: Նշեց, որ իր գործունեության 20 տարիների ընթացքում Բանկը ստեղծել է ավելի քան 330.000 անձ ներառող հաճախորդային բազա, ընդլայնել է իր ներկայության աշխարհագրությունը և այսօր ներկայացված է 57 մասնաճյուղերով: Զուգահեռաբար հետևելով ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման միտումներին, Բանկը շարունակել է կատարելագործել բջջային բանկինգի հավելվածը, հայկական բանկերից առաջիններից մեկն է, որ իր հաճախորդներին առաջարկեց Apple Pay-ի անհայում վճարումները:

**Ժողովի նախագահը** նշեց Բանկի ձեռքբերումները pos-վարկավորման և ՓՄՁ ֆինանսավորման ոլորտում, պարտատոմսերի շուկայում և անդրսահմանյան գործառնություններում: Նշեց, որ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակներում Յունիբանկը շարունակել է աջակցել մշակութային և կրթական միջոցառումների անցկացմանը:

Ամփոփելով՝ **Գագիկ Զաքարյանը** շնորհակալություն հայտնեց Բանկի բաժնետերերին, հաճախորդներին, գործընկերներին՝ վստահության և հավատարմության համար, աշխատակիցներին՝ համակարգված աշխատանքի համար, Կենտրոնական բանկին, Հայաստանի Բանկերի Միությանը, ֆոնդային բորսային՝ աջակցության և համագործակցության համար:

**Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը** խոսքը փոխանցեց Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանին՝ 2021 թվականին կատարած աշխատանքների վերաբերյալ Վարչության հաշվետվությունը ներկայացնելու համար:

**Հարց 1. <Յունիբանկ> ԲԲԸ 2021թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվության հաստատում:**

**Վարչության նախագահ-գործադիր տնօրեն Մեսրոպ Հակոբյանը** ներկայացրեց <Յունիբանկ> ԲԲԸ 2021թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվությունը: Նշեց, որ կառավարման արդյունավետ գործիքների օպերատիվ կիրառման շնորհիվ Բանկը բավական հաջողությամբ հաղթահարեց նախորդ տարվա տնտեսական ճգնաժամը: Բանկի ֆինանսական կայունության և ներդրումային գրավչության բարձրացումը, ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործումը և ակտիվների որակի բարելավումը շարունակել են առաջնահերթ լինել Բանկի գործունեության մեջ: Միևնույն ժամանակ, Բանկի գործունեությունը չի սահմանափակվել միայն վերը նշված խնդիրների լուծմամբ. մեծ ուշադրություն է դարձվել ներքին հսկողության համակարգին՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի, համապատասխանության և մատուցվող ծառայությունների որակի բարելավման ոլորտում:

**Մեսրոպ Հակոբյանն** ամփոփ ներկայացրեց Բանկի ֆինանսական ցուցանիշները, վարկավորման առաջնահերթ ուղղությունները, 2021թ. Բանկի կադրային քաղաքականության խնդիրները: Գիտակցելով տնտեսական զարգացման ներկայիս մարտահրավերներն ու իրողությունները՝ 2022թ. զարգացման ռազմավարությունում Բանկը սահմանել է հետևյալ առաջնահերթությունները՝ բաժնետիրական կառուցվածքի ընդլայնում և դիվերսիֆիկացում, սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման միջոցով կապիտալի ներգրավում, միջազգային ֆինանսական ինստիտուտների հետ համագործակցության զարգացում, մանրածախ վարկավորման շուկայում Բանկի մասնաբաժնի ավելացում, <կանաչ> ֆինանսավորման սեգմենտի շուկա մուտքագործում, ֆինանսական տեխնոլոգիաների զարգացում, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մեխանիզմների կատարելագործում և լավագույն փորձի ներդրում:

Եզրափակելով՝ **Մեսրոպ Հակոբյանը** շնորհակալություն հայտնեց բաժնետերերին աջակցության և վստահության համար, հաճախորդներին և գործընկերներին՝ արդյունավետ համագործակցության համար, երախտագիտություն հայտնեց Յունիբանկի թիմին պրոֆեսիոնալիզմի և նվիրվածության համար:

Բաժնետերերի ժողովը հաստատեց <Յունիբանկ> ԲԲԸ 2021թ. գործունեության վերաբերյալ Վարչության հաշվետվությունը քվեարկության հետևյալ արդյունքներով.

- կողմ՝** 162,308,261 ձայն կամ մասնակիցների ձայների 100%
- դեմ՝** 0 ձայն
- ձեռնպահ՝** 0 ձայն
- անվավեր՝** 0 ձայն

**Հարց 2. <Յունիբանկ> ԲԲԸ 2021թ. ֆինանսական հաշվետվությունների հաստատում:  
<Յունիբանկ> ԲԲԸ 2021թ. ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ <Գրանթ  
Թորնթոն> աուդիտորական ընկերության եզրակացության ներկայացում:**

**Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - գլխավոր հաշվապահ Գոհար Գրիգորյանը** ներկայացրեց Խորհրդի կողմից նախնական հաստատված ըստ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կազմված Բանկի 2021 թվականի տարեկան հաշվետվությունները հետևյալ հիմնական ցուցանիշներով.

1. դրամական միջոցներ և դրանց համարժեքներ՝ 63,239,222 հազ ՀՀ դրամ
2. ածանցյալ ֆինանսական ակտիվներ՝ 5,239 հազ ՀՀ դրամ
3. պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ՝ 16,182,224 հազ ՀՀ դրամ
4. հաճախորդներին տրված վարկեր և այլն փոխատվություններ՝ 135,413,053 հազ ՀՀ դրամ
5. ներդրումային արժեթղթեր՝ 17,394,144 հազ ՀՀ դրամ
6. վաճառքի և հետզնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր՝ 0
7. հիմնական միջոցներ՝ 10,767,377 հազ ՀՀ դրամ
8. ոչ նյութական ակտիվներ՝ 2,728,749 հազ ՀՀ դրամ
9. հետաձգված հարկային ակտիվ՝ 480,335 հազ ՀՀ դրամ
10. կանխավճարներ շահութահարկի գծով՝ 310,366 հազ ՀՀ դրամ
11. այլ ակտիվներ՝ 6,302,758 ՀՀ դրամ
12. ընդամենը ակտիվներ՝ 252,823,467 հազ ՀՀ դրամ
13. պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ՝ 10,906,695 հազ ՀՀ դրամ
14. պարտավորություններ հաճախորդների նկատմամբ՝ 193,643,724 ՀՀ դրամ
15. ածանցյալ ֆինանսական պարտավորություններ՝ 10,867 հազ ՀՀ դրամ
16. փոխառություններ՝ 3,121,387 հազ ՀՀ դրամ
17. թողարկված պարտքային արժեթղթեր՝ 12,168,789 հազ ՀՀ դրամ
18. եկամտային հարկի գծով ընթացիկ պարտավորություն՝ 65,120 հազ ՀՀ դրամ
19. հետաձգված հարկային պարտավորություն՝ 0
20. այլ պարտավորություններ՝ 2,135,833 հազ ՀՀ դրամ
21. ընդամենը պարտավորություններ՝ 222,052,415 հազ ՀՀ դրամ
22. բաժնետիրական կապիտալ՝ 21,588,653 հազ ՀՀ դրամ
23. էմիսիոն եկամուտ՝ 9,605,638 հազ ՀՀ դրամ
24. գլխավոր պահուստ՝ 641,779 հազ ՀՀ դրամ
25. այլ պահուստներ՝ 1,732,279 հազ ՀՀ դրամ
26. չբաշխված շահույթ (կուտակված վնաս)՝ (2,797,297) հազ ՀՀ դրամ
27. ընդամենը՝ սեփական կապիտալ՝ 30,771,052 հազ ՀՀ դրամ
28. ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ՝ 252,823,467 հազ ՀՀ դրամ

Բանկի եկամուտների և ծախսերի կառուցվածքը՝

- տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով՝ 20,914,648 հազ ՀՀ դրամ
- տոկոսային ծախսեր՝ (9,956,532) հազ ՀՀ դրամ

- զուտ տոկոսային եկամուտներ՝ 10,958,116 հազ ՀՀ դրամ
- միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ՝ 3,513,711 հազ ՀՀ դրամ
- միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսեր՝ (640,647) հազ ՀՀ դրամ
- միջնորդավճարների և այլ վճարների գծով զուտ եկամուտ՝ 2,873,064 հազ ՀՀ դրամ
- զուտ առևտրային եկամուտ՝ 3,111,291 հազ ՀՀ դրամ
- այլ եկամուտներ՝ 565,509 հազ ՀՀ դրամ
- ակտիվների արժեզրկման ծախս՝ (13,073,328) հազ ՀՀ դրամ
- անձնակազմի գծով ծախսեր՝ (3,911,513) հազ ՀՀ դրամ
- հիմնական միջոցների մաշվածություն՝ (1,045,796) հազ ՀՀ դրամ
- ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա՝ (171,891) հազ ՀՀ դրամ
- այլ ծախսեր՝ (4,380,314) հազ ՀՀ դրամ
- շահույթ/(վնաս) մինչև հարկումը՝ (5,074,862) հազ ՀՀ դրամ
- շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում՝ 738,820 հազ ՀՀ դրամ
- տարվա շահույթ/(վնաս)՝ (4,336,042) հազ ՀՀ դրամ

**Դրամական միջոցների հոսքը՝**

- դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները՝ 10,272,348 հազ ՀՀ դրամ
- գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր՝ 62,735,504 հազ դրամ
- դրամական զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից՝ (3,286,719) հազ ՀՀ դրամ
- զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից՝ (19,749,647) հազ ՀՀ դրամ
- դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճը՝ 39,699,138 հազ ՀՀ դրամ
- արտարժույթի փոխանակման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա՝ (4,925,650) հազ ՀՀ դրամ
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ՝ 28,450,237 հազ ՀՀ դրամ
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ՝ 63,239,222 հազ ՀՀ դրամ

**Գոհար Գրիգորյանը** ներկայացրեց <Գրանթ Թորնթոն> աուդիտորական ընկերության եզրակացությունը, համաձայն որի Բանկի ֆինանսական հաշվետվությունները տալիս են <Յունիբանկ> բաց բաժնետիրական ընկերության 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Բաժնետերերի ժողովը հաստատեց <Յունիբանկ> ԲԲԸ 2021թ. ֆինանսական հաշվետվությունները քվեարկության հետևյալ արդյունքներով.

**Կողմ՝** 162,308,261 ձայն կամ մասնակիցների ձայների 100%

**դեմ՝** 0 ձայն

**ձեռնպահ՝** 0 ձայն

**անվավեր՝** 0 ձայն

**Հարց 3. 2021թ. Ներքին աուդիտի հաշվետվության հաստատում: <Յունիբանկ> ԲԲԸ ներքին հսկողության համակարգի վերաբերյալ Ներքին աուդիտի եզրակացության ներկայացում:**

**Ներքին աուդիտի տնօրեն Արթուր Ղուկասովը** ներկայացրեց ըստ տարեկան աշխատանքային ծրագրի անցկացրած և արտապլանային աուդիտորական ստուգումների ոլորտները: Տարվա ընթացքում իրականացվել է համալիր ստուգում 15 մասնաճյուղերում, 44 մասնաճյուղերում՝ նպատակային ստուգումներ ըստ ոլորտների, գլխամասային գրասենյակում իրականացվել է գործունեության 8 ոլորտների աուդիտ:

Հայտնաբերված խնդիրների լուծման նպատակով կազմվել են միջոցառումների ծրագրեր, որոնց կատարման նկատմամբ իրականացվել է հետևողական հսկողություն: Նախկինում հայտնաբերված խախտումների և անհամապատասխանությունների վերացման նկատմամբ հսկողության իրականացման նպատակով կատարվել են արտապլանային ստուգումներ:

Ներկայացնելով Բանկի ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ Ներքին աուդիտի կարծիքի հիմքում ընկած միջոցառումները՝, **Արթուր Ղուկասովը** եզրափակեց, որ Բանկի ներքին հսկողության համակարգը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն պայմաններին:

Բաժնետերերի ժողովը հաստատեց <Յունիբանկ> ԲԲԸ 2021թ. Ներքին աուդիտի հաշվետվությունը քվեարկության հետևյալ արդյունքներով.

**կողմ՝** 162,308,261 ձայն կամ մասնակիցների ձայների 100%

**դեմ՝** 0 ձայն

**ձեռնպահ՝** 0 ձայն

**անվավեր՝** 0 ձայն

**Հարց 4. <Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի անդամների ընտրություն և քանակական կազմի հաստատում:**

**Մեսրոպ Հակոբյանը** ներկայացրեց Խորհրդի անդամների ընտրության վերաբերյալ Խորհրդի հետևյալ առաջարկությունները՝

- Խորհրդի քանակական կազմը թողնել անփոփոխ:
- Վերընտրել Խորհրդի անդամներ Գագիկ Զաքարյանին, Գեորգի Պիսկովին, Էդուարդ Զամանյանին, Հրահատ Արզումանյանին, Դավիթ Փափազյանին, Վարդան Աթայանին, Արտեմ Կոնստանդյանին:

**Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով՝** <Յունիբանկ> ԲԲԸ բաժնետեր <Uniholding GG Limited> ընկերության լիազոր ներկայացուցիչներ

**Էդուարդ Զամանյան**

**Հրահատ Արզումանյան**

**Դավիթ Փափազյան**

**Վարդան Աթայան**

**Արտեմ Կոնստանդյան**

Քվեարկության արդյունքներով թեկնածուները ստացել են ձայների հետևյալ քանակը.

Գագիկ Զաքարյան՝ 23,190,064 ձայն  
Գեորգի Պիսկով՝ 23,181,964 ձայն  
Էդուարդ Զամանյան՝ 23,171,815 ձայն  
Հրահատ Արզումանյան՝ 23,171,414 ձայն  
Դավիթ Փափազյան՝ 23,173,954 ձայն  
Վարդան Աթայան՝ 23,178,872 ձայն  
Արտեմ Կոնստանդյան՝ 23,173,837 ձայն  
**Բոլոր թեկնածուների դեմ՝ 0 ձայն**  
**Թեկնածուների գծով ձեռնպահ՝ 0 ձայն**  
**Անվավեր՝ 66,341 ձայն կամ մասնակիցների ձայների 0,04%**

Բաժնետերերի ժողովը որոշում կայացրեց <Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի քանակական կազմը թողնել անփոփոխ, վերընտրել Խորհրդի անդամներ Գագիկ Զաքարյանին, Գեորգի Պիսկովին, Էդուարդ Զամանյանին, Հրահատ Արզումանյանին, Դավիթ Փափազյանին, Վարդան Աթայանին, Արտեմ Կոնստանդյանին և հաստատել Խորհուրդը հետևյալ կազմով՝ Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով, Էդուարդ Զամանյան, Հրահատ Արզումանյան, Դավիթ Փափազյան, Վարդան Աթայան, Արտեմ Կոնստանդյան:

**Հարց 5. <Յունիբանկ> ԲԲԸ 2021թ. ֆինանսական արդյունքներով տարեկան շահութաբաժինների վճարման որոշման ընդունում:**

**Գոհար Գրիգորյանը** ներկայացրեց, որ Բանկի 2021թ. ֆինանսական գործունեության արդյունքներով, Բանկի Խորհրդի 20.05.2022թ. որոշմամբ առաջարկվում է սովորական անվանական բաժնետոմսերի գծով տարեկան շահութաբաժիններ չվճարել, համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով ներկայացված ֆինանսական հաշվետվությունների՝ ճանաչել 2021թ. առաջացած 4,336,042 հազար ՀՀ դրամ գումարի չափով վնասը:

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշում կայացրեց՝ սովորական անվանական բաժնետոմսերի գծով տարեկան շահութաբաժիններ չվճարել, համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով ներկայացված ֆինանսական հաշվետվությունների՝ ճանաչել 2021թ. առաջացած 4,336,042 հազար ՀՀ դրամ գումարի չափով վնասը:

**Կողմ՝ 162,308,261 ձայն կամ մասնակիցների ձայների 100%**  
**դեմ՝ 0 ձայն**  
**ձեռնպահ՝ 0 ձայն**  
**անվավեր՝ 0 ձայն**

**Հարց 6. <Յունիբանկ> ԲԲԸ 2022թ ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն անցկացնող անձի հաստատում:**

**Գոհար Գրիգորյանը** ներկայացրեց, որ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ 2022թ. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության նպատակով Բանկի կողմից հայտարարվել էր մրցույթ, որին մասնակցության հայտ է ներկայացրել <Գրանյթ Թորնթոն> ՓԲԸ-ն:

Մրցութային հանձնաժողովի՝ Բանկի Վարչության կողմից մրցույթը անցկացվել է, և արդյունքներն ամփոփվել են ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգի և Բանկի ներքին իրավական ակտով սահմանված պահանջներին համապատասխան: 13.04.2022թ. Վարչության որոշմամբ, հիմք ընդունելով մրցութային առաջարկի արդյունքների գնահատումը, հաղթող է ճանաչվել< Գրանթ Թորնթոն> ՓԲԸ-ն: <Յունիբանկ> ԲԲԸ 20.05.2022թ. Խորհրդի որոշմամբ, Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացվում <Գրանթ Թորնթոն> ՓԲԸ-ն որպես <Յունիբանկ> ԲԲԸ 2022-2024թթ. Ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն անցկացնող անձ:

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշում կայացրեց հաստատել <Գրանթ Թորնթոն> ՓԲԸ միջազգային անկախ աուդիտորական կազմակերպությանը որպես <Յունիբանկ> ԲԲԸ 2022-2024թթ. Ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն անցկացնող անձ:

**կողմ՝** 162,308,261 ձայն կամ մասնակիցների ձայների 100%  
**դեմ՝** 0 ձայն  
**ձեռնպահ՝** 0 ձայն  
**անվավեր՝** 0 ձայն

**Հարց 7. <<Յունիբանկ> ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ> և <<Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի կանոնակարգ> ներքին իրավական ակտերի գնահատում**

**Վարչության նախագահի տեղակալ, Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետքերման տնօրեն Օվսաննա Առաքելյանը** ներկայացրեց, որ <<Յունիբանկ> ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ> և <<Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի կանոնակարգ> ներքին իրավական ակտերը վերահաստատվել են 16.06.2021թ. Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ: Հաշվի առնելով, որ <<Բանկերի և բանկային գործունեության մասին>> ՀՀ օրենքում, ինչպես նաև ենթաօրենսդրական ակտերում չեն կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք կհանգեցնեին նշված իրավական ակտերը խմբագրելու անհրաժեշտության, ի հայտ չեն եկել էական անհամապատասխանություններ, 20.05.2022թ. Խորհրդի որոշմամբ առաջարկվում է նշված ներքին իրավական ակտերը թողնել անփոփոխ:

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշում կայացրեց թողնել անփոփոխ <<Յունիբանկ> ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ> և <<Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի կանոնակարգ> ներքին իրավական ակտերը:

**կողմ՝** 162,308,261 ձայն կամ մասնակիցների ձայների 100%  
**դեմ՝** 0 ձայն  
**ձեռնպահ՝** 0 ձայն  
**անվավեր՝** 0 ձայն



**Աննա Բաղդյանը** հայտարարեց, որ ժողովի օրակարգի բոլոր հարցերը քննարկված են, որոշումներն ընդունված են, դիմեց ներկաներին հարցեր տալու առաջարկով: Լսարանի կողմից հարցեր չներկայացվեցին:

**Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանը** շնորհակալություն հայտնեց միջոցառման մասնակիցներին և համոզմունք հայտնեց, որ հետագա համագործակցությունը կլինի երկուստեք արդյունավետ:

Բաժնետերերի ժողովն ավարտվեց ժամը 14:50-ին:

---

**Գագիկ Զաքարյան**  
**Նախագահ**

---

**Աննա Բաղդյան**  
**Քարտուղար**

ք. Երևան, 27 հունիսի 2022թ.